Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 15-ի N 287 -Ն որոշման

Ձև

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ՝

1) փոխառու նշանակում է Հայաստանի Հանրապետություն.

2) ֆինանսավորման համաձայնագրեր նշանակում է գյուղական ֆինանսավորման բաժնի ծրագրային գործառնություններին աջակցելու նպատակով Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և փոխառուի, ինչպես նաև փոխառուի և այլ դոնոր կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրեր.

3) ՇՀՖԾ նշանակում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից ֆինանսավորվող Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին ծրագիր.

4) ԳԶՄՀ նշանակում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ.

5) ԾՂԽ նշանակում է Գյուղական կարողությունների ստեղծման և Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին ծրագրերի ղեկավար խորհուրդ, ինչպես նկարագրված է ֆինանսավորման համաձայնագրերում և սահմանված է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հուլիսի 12-ի N 653-Ն որոշմամբ.

6) լիազոր մարմին նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ.

7) ԾԻԳ նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ, որը հիմնվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 461-Ն որոշմամբ և որը պատասխանատու է Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի իրականացման և համակարգման համար.

8) ՎԽ նշանակում է վարկային խորհուրդ, ինչպես նկարագրված է ֆինանսավորման համաձայնագրերում.

9) ԾԻԳ-ի կանոնադրություն նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կանոնադրություն, որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 461-Ն որոշմամբ.

10) ԾԻԳ-ի տնօրեն նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն.

11) ԳՖԲ նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման ինքնուրույն բաժին, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1783-Ն որոշմամբ.

12) ՄՖԿ նշանակում է մասնակից ֆինանսական կառույց, ինչպես օրինակ՝ բանկը, վարկային և լիզինգային կազմակերպությունը կամ այլ ֆինանսական կառույց, որն ընտրվում է գյուղական ֆինանսավորման բաժնի վերաֆինանսավորման գործառույթներին մասնակցելու նպատակով.

13) ԳՏՏԶԾ նշանակում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից ֆինանսավորված գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր.

14) ԳՖԲ-ի ներդրումային ուղեցույց նշանակում է կանոնների և կանոնակարգերի համառոտագիր, որոնք ենթակա են կիրառման գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամից և այլ դոնորներից ստացված ֆինանսական միջոցների կառավարման համար.

15) ԳՖԲ-ի ծրագրային հաշիվներ նշանակում է ցանկացած հաշիվ, որի միջոցով ԳՖԲ-ն ստանում է արտաքին օժանդակություն գյուղական ֆինանսավորման բաժնի ծրագրային գործառույթների համար և ցանկացած հաշիվ, որն օգտագործվում է ծրագրային գործառնությունների համար.

16) ԳՖԲ-ի ծրագրային ակտիվները ներառում են բոլոր ֆինանսական միջոցները, որոնք տրամադրվում են Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի կողմից ֆինանսավորված և վերահսկվող ծրագրերի միջոցով կամ այլ դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցներ՝ այն բացառիկ պայմանով, որ դրանք կառավարվեն գյուղական ֆինանսավորման բաժնի սույն կանոնադրությամբ, և ներառում են հետադարձ հոսքը մասնակից ֆինանսական կառույցներից, տոկոսագումարները և ցանկացած այլ ակտիվներ, որոնք հաշվեգրվում են նշված միջոցներին.

17) ԳՖԲ-ի պետ նշանակում է գյուղական ֆինանսավորման բաժնի պետ.

18) ԳՖԲ-ի ծրագրային գործառնություններ նշանակում է գյուղական ֆինանսավորման բաժնի ծրագրային ակտիվների օգտագործում՝ մասնակից ֆինանսական կառույցներին ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով՝ վերաֆինանսավորելու համապատասխան ծրագրերի վարկավորումը, ինչպես նաև ֆինանսավորելու այնպիսի ընթացիկ կամ այլ ծախսեր, որոնք ֆինանսավորման համաձայնագրերի սահմանված կարգով անհրաժեշտ են

գյուղական ֆինանսավորման բաժնի ծրագրային գործառնությունները կառավարելու և վերահսկելու համար:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԳՖԲ-ի սույն կանոնադրությունն ընդունվում է կանոնակարգելու ԾԻԳ-ի կառուցվածքում որպես վերջինիս ստորաբաժանման ԳՖԲ-ի գործունեությունը, որն իրականացնելու է ֆինանսական համաձայնագրերով տրամադրված վարկային շրջանառու միջոցների կառավարումը և վերջիններիս նկատմամբ հսկողությունը:

1.2. Վարկային շրջանառու միջոցները տրամադրվում են ԳՖԲ-ին ԳՋՄՀ-ի կողմից ֆինանսավորված և վերահսկվող ծրագրերի միջոցով կամ այլ դոնոր կազմակերպությունների կողմից՝ պայմանով, որ դրանք կառավարվեն ԳՖԲ-ի կողմից ֆինանսական համաձայնագրերով, սույն կանոնադրությամբ և ներդրումային ուղեցույցով սահմանված կարգով:

1.3. ԳՖԲ-ն ԾԻԳ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է կառավարության վերաֆինանսավորման ծրագրերն իրականացնելու նպատակով, մասնավորապես, ԳՏՏՋԾ-ի և ՇՀՖԾ-ի շրջանակներում:

1.4. ԳՖԲ-ն իր գործառույթներն իրականացնելու է ԾԻԳ-ի անունից:

2. ԳՖԲ-ի ծրագրային գործառնությունները

2.1. ԳՖԲ-ի ծրագրային գործառնությունները նշանակում են ծրագրային ակտիվների օգտագործում ՄՖԿ-ներին ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով՝ վերաֆինանսավորելու համապատասխան ծրագրերի վարկավորումը ներդրումային ուղեցույցին համապատասխան, ինչպես նաև ֆինանսավորելու այնպիսի ընթացիկ կամ այլ ծախսեր, որոնք ֆինանսավորման համաձայնագրերով սահմանված կարգով անհրաժեշտ են ԳՖԲ-ի ծրագրային գործառնությունները կառավարելու և այդ միջոցների օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

2.2. Իր ծրագրային գործառույթների համար ԳՖԲ-ն ունի իր ստորաբաժանման անվանմամբ դրոշմակնիք:

3. ԳՖԲ-ի կառավարումը

3.1. Ծրագրի ղեկավար խորհուրդը (ԾՂԽ)՝

3.1.1. հաստատում է ԳՖԲ-ի ներդրումային ուղեցույցը և դրանում կատարված ցանկացած փոփոխություն և լրամշակում, որը ենթակա է համաձայնեցման ԳՋՄՀ-ի և այլ դոնորների հետ.

3.1.2. մշակում է ԳՖԲ-ի գործառնությունների ընդհանուր քաղաքականությունը և իրականացնում է դրա կիրառման նկատմամբ վերահսկողությունը.

3.1.3. որոշում է վերաֆինանսավորման ժամկետներն ու պայմանները, որոնք ենթակա են համաձայնեցման ԳՋՄՀ-ի և այլ դոնորների հետ.

3.1.4. հաստատում է ԳՖԲ-ի տարեկան աշխատանքային պլանը և բյուջեն.

3.1.5. հաստատում է ԳՖԲ-ի տարեկան ֆինանսական և կատարողականության վերաբերյալ հաշվետվությունները:

3.2. Վարկային խորհուրդը (ՎԽ) ՝

3.2.1. ներդրումային ուղեցույցին համապատասխան հաստատում կամ մերժում է ՄՖԿ-ների վերաֆինանսավորելու նպատակով վերջիններիս կողմից ստացված հայտերը.

3.2.2. ընդունում է որոշումներ ներդրումային ուղեցույցի ժամկետներին և պայմաններին ենթավարկերի համապատասխանության վերաբերյալ:

3.3. ԾՂԽ-ի և ՎԽ-ի կազմն ու գործունեությունը կարգավորվում են ֆինանսական համաձայնագրերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի համապատասխան որոշումներով:

3.4. ՎԽ-ի բոլոր որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Որոշման ընդունման ժամանակ ձայների հավասար լինելու դեպքում ՎԽ-ի նախագահի ձայնը վճռորոշ է: ՎԽ-ի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների հիսուն տոկոսը:

3.5. ՎԽ-ն իրավունք ունի մերժելու հայտը, ԳՖԲ-ի ներդրումային ուղեցույցում սահմանված իրավասության չափորոշիչների անհամապատասխանության դեպքում:

4. ԳՖԲ-ի պետը

4.1. ԳՖԲ-ի պետն ունի համապատասխան անհրաժեշտ լիազորություններ իրականացնելու ԳՖԲ-ի ծրագրային գործառնությունները, մասնավորապես, ԳՖԲ-ի ծրագրային գործառնությունների շրջանակներում ԾԻԳ-ի տնօրենի կողմից սահմանված կարգով տրված լիազորագրի հիման վրա ներկայացնելու ԳՖԲ-ն, սահմանված կարգով տնօրինել ԳՖԲ-ի հաշիվները և ԾԻԳ-ի անունից իր լիազորությունների սահմաններում ստանձնել պարտավորություններ:

4.2. ԳՖԲ-ի պետը գործում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

4.3. ԳՖԲ-ի պետն աշխատանքի է ընդունվում մրցութային կարգով: ԳՖԲ-ի պետի թեկնածուն պետք է ունենա ԳՋՄՀ-ի համար ընդունելի որակավորում և փորձառություն, իսկ նրա թեկնածությունը սահմանված կարգով ենթակա է հաստատման ԳՋՄՀ-ի կողմից: ԳՖԲ-ի պետը հաշվետու է ԾԻԳ-ի տնօրենին:

5. ԳՖԲ-ի աշխատակազմը

5.1. ԳՖԲ-ի աշխատողներն աշխատանքի են ընդունվում մրցութային կարգով՝ ԳՖԲ-ի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: ԳՖԲ-ի բանկային մասնագետը (մասնագետները) և հաշվապահը (հաշվապահները) նշանակվում են միայն ԳՋՄՀ-ի կողմից ստացված համաձայնության հիման վրա և գործատուի

նախաձեռնությամբ կարող են ազատվել աշխատանքից միայն ԳՋՄՀ-ի համաձայնությունն ստանալուց հետո:

ԳՖԲ-ի աշխատողներն իրականացնում են իրենց պարտականությունները ԳՖԲ-ի պետի և ԾԻԳ-ի տնօրենի կողմից ստացված հանձնարարականներին համապատասխան: ԳՖԲ-ի աշխատողներն անմիջականորեն հաշվետու են նրանց:

5.2. ԳՖԲ-ի ծրագրային ակտիվները սահմանված կարգով կարող են օգտագործվել ԳՖԲ-ի պետի և աշխատողների աշխատավարձերը վճարելու նպատակով՝ նախապես ստանալով լիազոր մարմնի համաձայնությունը: Նման հավելումները պետք է արդարացի և համամասնորեն հաշվարկվեն և բաշխվեն՝ հաշվի առնելով այն աշխատանքային ծանրաբեռնվածությունը, որ ԳՖԲ-ի պետը և աշխատակազմը ձեռնարկում են ԳՖԲ-ի ծրագրային գործառույթներն իրականացնելու նպատակով՝ համաձայն սույն կանոնադրության 6.1-ին կետի:

6. Ֆինանսական կառավարում

6.1. ԳՖԲ-ի ծրագրային ակտիվները, այդ թվում նաև վերաֆինանսավորման կապիտալի և գործառնական ծախսերի խնայողությունները (մնացորդը), օգտագործվում են բացառապես ԳՖԲ-ի ծրագրային գործառնությունների համար: Սույն կանոնադրությամբ արգելվում է ԳՖԲ-ի ծրագրային ակտիվների օգտագործումն այլ, ոչ ԳՖԲ-ի ծրագրային գործառնությունների նպատակով:

6.2. ԳՖԲ-ի ծրագրային ակտիվներն առանձնացվում են ԾԻԳ-ի մյուս ակտիվներից և պետք է վերահսկվեն, հաշվառվեն և ստուգվեն առանձին: ԳՖԲ-ն օգտագործում է համապատասխան համակարգչային ծրագրերն իր շրջանառու միջոցները վարելու նպատակով: Նման ծրագրերի փոփոխությունը սահմանված կարգով ենթակա է նախապես համաձայնեցման ԳՋՄՀ-ի հետ:

6.3. ԳՖԲ-ն ունի առանձին հաշիվներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարանում և ֆինանսական կառավարման համակարգեր, որոնք հնարավորու-

թյուն են տալիս իրականացնելու ԳՖԲ-ի ծրագրային ակտիվների առանձին հսկողություն, աուդիտ և հաշվառում:

6.4. ԳՖԲ-ի պետը հաշվետու է ԾԻԳ-ի տնօրենին: ԳՖԲ-ի գործառույթները ներառվում են տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում, ինչպես նաև ֆինանսական համաձայնագրերում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների մաս են կազմում:

7. ԾԻԳ-ի կողմից ԳՖԲ-ի համար կատարված գործառնական ծախսերի փոխհատուցումը

7.1. ԾԻԳ-ը կարող է կատարել ծախսեր ԳՖԲ-ի համար՝ ԳՖԲ-ի ծրագրային գործառնությունները վերջինիս կողմից իրականացնելու նպատակով: Նման ծախսերը կարող են ներառել՝

7.1.1. տարածքի վարձակալություն, այդ թվում նաև վճարումներ էլեկտրաէներգիայի, գազի, հեռախոսի, ՏՏ-ի և այլնի համար.

7.1.2. գրասենյակի կառավարում, այդ թվում նաև մաքրություն, անվտանգություն և այլն.

7.1.3. նյութատեխնիկական ապահովում, այդ թվում նաև վարորդներ և մեքենաներ:

7.2. Անհրաժեշտության դեպքում ԾԻԳ-ի տնօրենը և ԳՖԲ-ի պետը նախապես համաձայնություն պետք է ձեռք բերեն կատարվող ծախսերի ծավալների վերաբերյալ: ԾԻԳ-ը ԳՖԲ-ին եռամսյակային կտրվածքով կներկայացնի տեղեկանք ԾԻԳ-ի կողմից կատարված այն ծախսերի մասին, որոնք սահմանված կարգով ենթակա կլինեն փոխհատուցման ԳՖԲ-ի հաշվիվներից:

8. ԳՖԲ-ի իրավունքներն ու պարտավորությունները, իրավասությունները և պատասխանատվությունը

8.1. ԳՖԲ-ի իրավունքներն ու պարտականությունները, իրավասությունները և պատասխանատվությունը, կապված ծրագրային գործառնությունների և (կամ) ակտիվների հետ, որոնք

որպես ԾԻԳ-ի կառուցվածքային ստորաբաժանում վերջինիս հետ միավորման արդյունքում փոխանցվել են ԾԻԳ-ին, կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

Այդ իրավունքներն ու պարտականությունները, իրավասությունները և պատասխանատվությունը կազմում են ԳՖԲ-ի ծրագրային գործառույթների մաս, գտնվում են ԳՖԲ-ի պետի իրավասությունների շրջանակներում բացառությամբ այն իրավասությունների, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահված են ԾԻԳ-ի տնօրենին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ